



# ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Ապրիլ 5, 1990

Հոգեշնորհ

S. Սուրեն Վրդ. Զինչինեան

Հովհան Ս. Գրիգոր Նարեկացի Եկեղեցոյ

Նախագահ Ծխական Խորհուրդի

Գլխվաճառ.

Սիրելի Հայր Սուրբ,

Ստացուած է Առաջնորդ Սրբազնան Հօր ուղղուած Մարտ 24, 1990 թուակիր ձեր նամակը:

Այս նամակով կը տեղեկացնեք թէ Մարտ 4-ին, 1990, տեղի ունեցած է համայնքի Տարեկան Անդամական ժողովը, եւ այդ առթիւ ընտրուած են նաև Ծխական Խորհուրդի չորս անդամները: Կու տաք քուէարկութեանց արդինքը եւ կը խնդրեք նորընտիր անդամներու վաւերացումը:

Այս գրութեամբ կը փափաքիմ տեղեկացնել որ կը վաւերացուի Ծխական Խորհուրդի հետեւեալ անդամներու ընտրութիւնը՝

Սերոք Տէմիքճեան

Արա Պաղտասարեան

Հերքլու Զահիկեան

Ֆլորըն Գարողլանեան

Բարի եղէք շուտով Առաջնորդարան դրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամներուն անունները, հասցեները եւ հեռաձայնի թիւերը:

Զեզի եւ ձեր պաշտօնակիցներուն կը մաղթեմ առողջութիւն եւ ձեր բոլորին եկեղեցանուեր աշխատանքներուն յաջողութիւն:

Աղօթակից

Խաժակ Վրդ. Պարսամեան  
Առաջնորդի Փոխանորդ



# ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Թիւ 439  
Ապրիլ 15, 1991

Ազնուակալ  
Տիկին Ֆլորենս Գարողլամեան  
Ս. Գրիգոր Նարեկացի Եկեղեցւոյ  
Ծխական Խորհուրդի Ատենապետ  
Գլխվլընտ.

Ազնիւ Տիկին Գարողլամեան,

Ստացած ենք Մարտ 22, 1991 թուակիր ձեր նամակը և Եկեղեցւոյ տեղեկագիրը, որոնց համաձայն Փետրուար 24, 1991-ին գումարուած համայնքի Տարեկան Անդամական Ժողովի ընթացքին ընտրուած են Ծխական Խորհուրդին երեք անդամներու Կրտուին քուչարկութեան արդինքները և կը խնդրուի նորընտիր անդամներու վաւերացման պաշտօնագիրը:

Այս գրութեամբ կը վաւերացնենք Ծխական Խորհուրդի հետեւեալ անդամներու ընտրութիւնը.

Արչի Անտոնեան  
Ծէք Խաչերեան  
Շաալ Արսլամեան

Բարի եղեք շուտով Առաջնորդարան դրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիամի անդամներուն անունները, հասցէները և հնոաձայնի թիւները:

Այս առթիւ ձեր ուշադրութեամ կը յանձնենք որ Անդամական Ժողովին ներկայացուած Ծխական Խորհուրդի տեղեկագիրը պէտք է ստորագրուի Հոգեւոր Հովհիւմ (եթէ համայնքը ունի) Ատենապետին եւ Ատենադպիրին կողմէ:

Կ'օրինենք Ծխական Խորհուրդի նոր կազմը: Կը մաղթենք որ Տէրը իր հովանին անպակաս ընէ համայնքի անդամներուն վրայէն եւ բոլորին եկեղեցանուէր գործերուն յաջողութիւն պարգևէ:

Սիրոյ ողջունի

Խաժակ Եպս. Պարսամեան  
Առաջնորդ



DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA  
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՍԻ

BISHOP KHAJAG BARSAMIAN, PRIMATE

Թիւ 925  
Մայիս 28, 1992

Ազնուակայլ

Տիկին Ֆլորանս Գարողլամեան  
Ս. Գրիգոր Նարեկացի Եկեղեցւոյ  
Ծխական Խորհուրդի Ատենապետութի  
Ոիշմընտ Հայք.

Ազնիւ Տիկին Գարողլամեան,

Ստացած ենք համայնքի Անդամական Ժողովի տեղեկագիրները և ձեր ճամակը, որով կը տեղեկացնէք թէ համայնքի Տարեկան Անդամական Ժողովը գումարուած է Փետրուար 23, 1992-ին, և այդ առթիւ ընտրուած են Ծխական Խորհուրդին չորս անդամներ: Կու տաք քու էարկութեանց արդիւնքը եւ կը խնդրէք նորընտիր անդամներու վաւերացման պաշտօնագիրը:

Այս գրութեամբ կը վաւերացնենք Ծխական Խորհուրդի հետեւեալ անդամներու ընտրութիւնը.

Հայկ Արիաճեան  
Արա Պաղտասարեան  
Սերոբ Տէմիրճեան  
Ֆլորանս Գարողլամեան

Բարի եղէք շտառվ Առաջնորդարան դրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամներուն անունները, հասցեները եւ հեռաձայնի թիւները:

Կ'օրինենք Ծխական Խորհուրդի նոր կազմը: Մեր մաղթանքն է որ Տէրը իր հովանիկան ներքեւ պահէ համայնքի անդամները եւ բոլորին եկեղեցանուեր աշխատանքներուն յաջողութիւն պարգւեւ:

Սիրոյ ողջունի

Խաժակ Եպս. Պարսամեան  
Առաջնորդ



DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA  
ԱՐՄԵՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՍԻ

BISHOP KHAJAG BARSAMIAN, PRIMATE

Թիւ 1088  
Հոկտեմբեր 8, 1992

Բարեգնորհ  
Նորայր Մրկ. Օտապաշեան  
Հոգեւոր Մատակարար Ա. Գրիգոր Նարեկացի Եկեղեցւոյ  
Գլխվլընու.

Սիրելի Նորայր Սարկաւագ,

Սուացած ենք Սեպտեմբեր 28, 1992 թուակիր ճամակի, որով տարւոյս Դեկտեմբեր 20-ին  
մեզ կը հրաւիրես այցելել Գլիկլընտի համայնքը, Ա. Պատարագ մատուցանել եւ օծել  
Քրիստոսի մկրտութեան սրբանկարը:

Մեր շնորհակալութիւնը կը յայտնենք այս հրաւիրին համար եւ վերոյիշեալ թուականը կը  
վերապահենք Գլիկլընտի Ա. Գրիգոր Նարեկաց Եկեղեցւոյ մեր համայնքի այցելութեան:

Բարի եղիր այս այցելութեան կապակցութեամբ Ծխական Խորհուրդի կարգադրութիւններուն  
մասին առաջին առիթով տեղ եկացնել մեզի:

Սիրոյ ողջունիւ

ԽԱԺԱԿ ԱՐՔ. ՊԱՐՍԱՄԵԱՆ  
Առաջնորդ

Հայոց



Մեպտեմբեր 28, 1992

Բարձրաշնորհ՝  
Տ. Խաժակ Ս. Եպ. Պարսամեան  
Առաջնորդ Ամերիկահայոց Արեւելեան Թեմի  
Նիւ Եղբայր

Միրելի Սրբազն Հայր,

Սերկայ գրութեամբ կու գամ Զերդ Սրբազնութեան Զեզ Հրաւիրելու Քլիվլենտ Դեկտեմբեր 20, 1992ին թէ Սոււրբ Պատարագ մատուցանելու եւ թէ նոր նուիրուած սրբանկար մը օծելու:

Այս սրբանկարը (Քրիստոսի Մկրտութեան) կը նուիրուի Տէր եւ Տիկին Կարապետ Արքանեաններու կողմէ իրենց հանգուցեալ որդւոյն Գոհգորի յիշատակին:

Ուստի կը ինչդրեմ Զերդ Սրբազնութենէն որ բարեհաճիք ուղարկել Զեր համտատումը եւ որեւէ ուրիշ տեղեկութիւններ այցին կապակցութեամբ:

Կը մատչիմ ի համբոյր Զերդ Սրբազնութեան աշոյն:

Յարգան օք  
Հոգուած Արք Օսմանական  
Նորայր Արկ. Օտապաշեան

ST. GREGORY OF NAREK ARMENIAN CHURCH  
678 Richmond Road  
Richmond Heights, Ohio 44143  
(216) 381-6590